



armsymphony.am



ՀԱՅ
ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ
ԱՐԿԵՍՏԻ
ԺԱՌԱՏՈՆ

15

ARMENIAN
COMPOSING
ART
FESTIVAL

ՄԱՐՏԻ 14-28 MARCH

2024



ՀԱՅ
ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ
ԱՐՎԵՍՏԻ
ԺԱՌԱՏՈՆ

15

ARMENIAN
COMPOSING
ART
FESTIVAL

ՄԱՐՏԻ 14-28 MARCH
2024



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՍԻՄՖՈՆԻԿ
ՆԿԱԳԱՆՈՒՄԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՈՒՅՑԱՆ, ԳԻՏՈՒՅՑԱՆ,
ՄՇԱԿՈՒՅՑԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԳՆԵՐ ORGANIZERS

ԱԶԱԿԻՑ SUPPORTER

AGBU



ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարար

ZHANNA ANDREASYAN

Minister of Education, Science,
Culture and Sports

ԱՐԱՄ ՍԱԹՅԱՆ

Հայաստանի կոմպոզիտորների
միության նախագահ

ARAM SATIAN

President of the
Union of Composers of Armenia



Ջերմորեն ողջունում եմ Հայ կոմպոզիտորական արվեստի 15-րդ փառատոնի մասնակիցներին և հյուրերին:

Իր գոյության տարիների ընթացքում փառատոնը նշանակալից իրադարձություն է դարձել Հայաստանյան մշակութային կյանքում և շարունակում է ակտիվորեն զարգանալ՝ ներգրավելով երիտասարդ հանդիսատեսին իր փառատոնային ծրագրերին և հանդիսատեսին ներկայացնելով հայ կոմպոզիտորական դպրոցի վերջին միտումները:

Փառատոնի ծրագիրն ավանդաբար հարուստ է ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների պրեմիերաներով, ստեղծագործական միջոցառումներով և հանդիպումներով, քանզի փառատոնը նպատակաուղղված է նաև հայ ժամանակակից կոմպոզիտորական արվեստի զարգացմանը, երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների ներկայացմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս տարի նշվում են նաև մեր նշանավոր ժամանակակից կոմպոզիտորներ Տիգրան Մանսուրյանի և Ռոբերտ Ամիրխանյանի հոբելյանները, ՀՀ կառավարությունը պլանավորել է վերանորոգել Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի տունը, որտեղ վերանորոգումից հետո, համոզված եմ, հիանալի հարթակ կդառնա ժամանակակից կոմպոզիտորական արվեստի ներկայացման համար դրանով իսկ հարստացնելով մարզային մշակութային կյանքը:

Սիրելի՛ բարեկամներ, շնորհավորելով փառատոնի կազմակերպիչներին և մասնակիցներին, մաղթում եմ ստեղծագործական թռիչքներ, մեծ բեմեր, իսկ մեր երաժշտասեր հանրությանը՝ տոնական տրամադրություն:



I warmly welcome the participants and guests to the 15th Armenian Composing Art Festival. Over the years, this festival has evolved into a significant event in Armenian cultural life, actively developing and attracting young audiences with its programs, consistently pursuing the presentation of the latest trends of the Armenian classical music composing school.

The festival's program is traditionally rich in premieres of works by contemporary Armenian composers, featuring creative events and meetings. Since it is, in a big part, aimed at fostering the development of modern Armenian composing art and showcasing the works of young composers.

Considering that this year marks the jubilees of two of our renowned modern composers, Tigran Mansuryan and Robert Amirkhanyan, the Government of Armenia is planning to renovate the Tigran Mansuryan Cultural Center in Artik. I firmly believe that, once renovated, it will grow into an excellent platform for presenting modern composing art, thereby enriching the cultural life in this region.

Dear friends, as I extend my congratulations to the organizers and participants of the festival, I wish them creative achievements, grand stages, and a festive mood for our music-loving public.

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը, որն ունի 15 տարվա պատմություն, մեկնարկել է 2010 թվականին: Փառատոնը նշանակալից իրադարձություն է ինչպես կոմպոզիտորների, այնպես էլ երաժշտասերների լայն հանրության համար: Այն այս տարի ևս ներկայանում է հետաքրքիր ծրագրով, որում ընդգրկված են 20-րդ դարի հայ կոմպոզիտորական արվեստի ակնառու ներկայացուցիչների ստեղծագործությունները և հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների պրեմիերաները:

Մեծ կարևորություն եմ տալիս Հայաստանի կոմպոզիտորների միության և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի միջև կնքված համագործակցության հուշագրին, որն, անկասկած, նպաստում է փառատոնի առաջընթացին: Ուշագրավ է նաև միության երիտասարդական մասնաճյուղի և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի միջև համագործակցությունը, որի արդյունքում երիտասարդ կոմպոզիտորների սիմֆոնիկ ստեղծագործությունները ևս հնչում են այս փառատոնի համերգների ընթացքում:

Կարծում եմ՝ Հայաստանի կոմպոզիտորների միության և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համագործակցությունը՝ Նոր հորիզոններ է բացել հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների պահպանման և հանրահռչակման կարևոր գործում:



The Armenian Composing Art Festival, with a history spanning 15 years, was launched in 2010. The festival stands out as a significant event for both composers and the broader community of music enthusiasts. Similar to previous years, this year's edition boasts an exciting festival program, showcasing works by distinguished representatives of the 20th-century Armenian classical music, while also premiering compositions by contemporary Armenian composers.

I attach great importance to the Memorandum of Cooperation signed between the Union of Composers of Armenia and the Armenian State Symphony Orchestra, which undoubtedly contributes to the festival's advancement. The collaboration between the Youth branch of the Union and the Armenian State Symphony Orchestra deserves special attention, as it provides an opportunity for some of the symphonic works by young composers to be featured during the concerts of this festival.

I believe that the cooperation between the Union of Composers of Armenia and the Armenian State Symphony Orchestra has opened new horizons in the meaningful goal of preserving and popularizing the works of Armenian composers.

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ



Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը հայաստանյան մշակութային կյանքի Նշանակալից իրադարձություններից է և 2010 թվականին հիմնադրվելուց ի վեր անշեղորեն հետևում է հայ դասական և արդի կոմպոզիտորական դպրոցի, ավանդույթների պահպանման, ճանաչման և ընդլայնման իր առաքելությանը:

Ամենամյա փառատոնը ստեղծվել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ու գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ջանքերով և իր կայացման տարիներին մշտապես ունեցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությունը, իսկ 2022 թվականից սկսած այն անցկացվում է Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ:

Ցավոք, հայտնի է, որ հայ կոմպոզիտորների բազմաթիվ ստեղծագործությունների պարտիտուրներ դեռևս մնում են հեղինակների անձնական կամ այլ արխիվներում և հաճախ գտնվում են անմխիթար վիճակում՝ հասանելի չլինելով ստեղծագործությունների համերգային ներկայացման համար: Փառատոնի կարևորագույն բաղադրիչներից է հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունների տեսաձայնագրումը, պարտիտուրների և նվագաբաժինների թվայնացումը և պահպանումը:



Փառատոնի գոյության ընթացքում թվայնացվել է հայ կոմպոզիտորների 100-ից ավելի մեծակտավ ստեղծագործություն, ձայնագրվել են 250-ից ավելի երաժշտական երկեր, որոնց մի մասը թողարկվել է նվագախմբի սեփական «Armsymphony Records» ձայնագրային պիտակի ներքո:



Անցած տարիների ընթացքում փառատոնի շրջանակում իրականացվել են 170-ից ավելի պրեմիերաներ՝ ներգրավելով Հայաստանում գործող նվագախմբերի, երգչախմբերի և կամերային համույթների, ինչպես նաև բազմաթիվ անհատ կատարողների, այդ թվում՝ տաղանդավոր երիտասարդ երաժիշտների:

Փառատոնի համերգներին որպես մենակատարներ հանդես են գալիս անվանի արտիստներ, ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից՝ հայ կոմպոզիտորների բազմաժանր ստեղծագործություններն ընդգրկելով իրենց երկացանկերում:

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը նաև հնարավորություն է ստեղծում անցյալի և ներկա մեծանուն կոմպոզիտորների երաժշտական ժառանգության կողքին ներկայացնելու նաև երիտասարդ և նորահայտ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

ARMENIAN COMPOSING ART FESTIVAL



Throughout the festival's existence, more than 100 large-scale works have been digitized and an impressive catalog of over 250 musical pieces has been recorded by the Armenian State Symphony Orchestra, some of which have been released under the orchestra's own "ArmSymphony Records" label.



The Armenian Composing Art Festival stands out as one of the most prominent events in the cultural life of Armenia. Since its establishment in 2010, it has invariably adhered to the mission of recognizing and promoting Armenian traditional and contemporary classical music, as well as Armenian composers.

The annual festival was founded through the efforts of Sergey Smbatyan, the Artistic Director and Principal Conductor of the Armenian State Symphony Orchestra, and has received consistent support from the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia throughout its development. Starting from 2022, the festival has been held in collaboration with the Union of Composers of Armenia.

As is unfortunately known, the scores of numerous works by Armenian composers remain unattended in their personal or other archives, often found in poor conditions and hardly usable for concert performances. One of the central assets of the festival are the audio/video recordings of symphonic and chamber works by Armenian composers, as well as digitization and preservation of unique scores.



Over the years, the festival has showcased more than 170 premieres with the involvement of various orchestras, choirs and chamber ensembles in Armenia, as well as numerous soloists, including talented young performers.

Renowned artists from both Armenia and abroad have been featured as soloists in the festival concerts, enriching their repertoires with multi-genre works by Armenian composers.

The Armenian Composing Art Festival provides an excellent platform to showcase the compositions of young and emerging composers, alongside celebrating the musical legacy of iconic classical composers.

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆԻ 15 ՏԱՐԿԱ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆԱԳՎԱԾ
ՀԱՍԵՐՁՆԵՐ
69

ՓԱՌԱՏՈՆԻՆ ՄԱՍՆԱԿՑՎԱԾ
ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ
90

ԶԱՅՆԱԳՐՎԱԾ
ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
283

ՓԱՌԱՏՈՆԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ
ՊՐԵՄԻԵՐԱՆԵՐ
170

ՓԱՌԱՏՈՆԻՆ ՄԱՍՆԱԿՑՎԱԾ
ՄԵՆԱԿԱՏԱՐՆԵՐ
174

ԹՎԱՅՆԱԳՎԱԾ
ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
120

STATISTICS OF 15 YEARS OF THE ARMENIAN COMPOSING ART FESTIVAL

PERFORMED
CONCERTS
69

ARMENIAN COMPOSERS
TO HAVE PARTICIPATED
IN THE FESTIVAL
90

RECORDED
COMPOSITIONS
283

PREMIERES
AT THE FESTIVAL
170

SOLOISTS INVOLVED
IN THE FESTIVAL
174

DIGITIZED
COMPOSITIONS
120



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՍՑՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ



Այժմ ինչպես հայրենիքում, այնպես էլ արտերկրում մեծ հեղինակություն վայելող Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը ստեղծվել է երաժշտության միջոցով հոգևոր վերելքի ձգտման և հայկական երաժշտական ավանդույթների պահպանման նպատակների շուրջ միավորված մի խումբ դասական երաժշտության նվիրյալների ուժերով: Իր հստակ ու Նրբագեղ հնչողությամբ, ինչպես նաև ազդեցիկ կատարողական ոճով ճանաչված նվագախումբը սպասված հյուր է աշխարհի բազմաթիվ առաջատար համերգասրահներում:

Նվագախումբը Հայաստանում և ամբողջ աշխարհում ամեն տարի հանդես է գալիս ավելի քան 50 ելույթով իր հարուստ և բազմազան երկացանկում ներառելով տարբեր ժանրերի և կատարողական ձևաչափերի համերգներ՝ սիմֆոնիկ, բալետային ու օպերային երաժշտությունից մինչև հանրամատչելի կամ կինեմատոգրաֆիական երաժշտության սիմֆոնիկ փոխադրումներ և դասական երաժշտության ջազային մեկնաբանություններ: Դասական երաժշտության համաշխարհային ժառանգության նմուշների դեբյուտային կատարումներից զատ՝ նվագախումբը մեծ տեղ է հատկացնում նաև ժամանակակից և Նորահայտ երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործություններին՝ բազմաթիվ Նոր գործեր ներկայացնելով իր համերգաշրջանների հիմնական համերգային ծրագրերում:

Նվագախումբն իր հիմնադիր ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի հետ համատեղ ստեղծել է չորս ամենամյա փառատոն, որոնց շրջանակում Հայաստան են հրավիրվել համաշխարհային մեծության բազմաթիվ վիրտուոզ մենակատարներ և դիրիժորներ, ինչպիսիք են Գիլ Ծահամբ, Միշա Մայսկին, Սթիվեն Իսերլիսը, Մաքսիմ Կենգերովը, Միխայիլ Պլետնյովը, Գոթթե Կապյուսոնը, Սերգեյ Խաչատրյանը, Ասդրեսա Օտտենլանդը, Նին Ֆանգը, Յոզեֆ Կալլեյան, Թոմաս Զեմֆսոնը, Դմիտրի Յաբլոնսկին, Հաննու Լինտոն, Ջոն Մալկովիչը և շատ այլ արտիստներ: Նվագախումբը թանկարժեք բարեկամության և համագործակցության բազմամյա փորձ ունի ժամանակակից այնպիսի մեծանուն կոմպոզիտորների հետ, ինչպիսիք են Արվր Պյարոնը, Տիգրան Մանսուրյանը, Բջիշտոֆ Պենդերեցկին, Գիյա Կանչելիս, Արր Կառլ Ջենքինսը և Քիգանգ Չենը:



Դասական երաժշտության և արդի տեխնոլոգիաների նշանակալից երկխոսության հանդեպ հավաստի շնորհիվ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը հանրությանը ներկայանում է որպես տեխնոլոգիական նորարարությունների միտված նվագախումբ, որն իր փորձարարական բազմազան նորույթների որոնումներում կիրառում է արհեստական բանականության հնարավորություններ և բարձր տեխնոլոգիական այլ լուծումներ՝ հետապնդելով գեղարվեստական նորանոր նպատակներ:

Տարեցտարի ընդլայնվում է նաև նվագախմբի դերը Հայաստանում երիտասարդների կրթության ուղղությամբ:

2018 թվականին ստեղծված «Սիմֆոնիկ ԴասA» կրթամշակութային ծրագիրը ձգտում է ավագ դպրոցի աշակերտների շրջանում արթնացնել հետաքրքրություն և համակրանք դասական երաժշտության հանդեպ՝ պատանիներին հնարավորինս մերձեցնելով դասական բարձրարժեք երաժշտարվեստին:

Նվագախումբը նաև զբաղվում է ուսանողական համայնքի հետ «Իմ Սիմֆոնիկ» Նախագծի շրջանակում՝ կազմակերպելով ֆոկլուս խմբային հարցումներ, ճանաչողական հանդիպումներ և հրավերներ համերգներին: Կրթական ծրագրերից բացի, երիտասարդ երաժիշտների համար պարբերաբար անցկացվում են նաև վարպետության դասեր՝ հրավիրյալ աշխարհահռչակ երաժիշտների մասնակցությամբ:

Հետամուտ լինելով իր սոցիալական պատասխանատվությանը՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը հանձնառություն է կրում նաև հանրության խոցելի խմբերի մշակութային ներգրավման համար՝ նրանց պարբերաբար տրամադրելով իր համերգներին անվճար հաճախումների հրավերներ, ինչպես նաև մասնակցում է դրամահավաքային նպատակներով իրականացվող բարեգործական համերգների և միջոցառումների:

ARMENIAN STATE SYMPHONY ORCHESTRA



Now a celebrated symphony orchestra at home and overseas, the Armenian State Symphony Orchestra emerged from a group of devout enthusiasts of classical music with the shared vision of championing spiritual excellence through music and upholding the musical traditions of their native Armenia. Reputed to have finely distinct quality of sound and emotionally charged performance style, the orchestra has long become an awaited guest in leading concert halls around the world.

The orchestra performs over 50 concerts in Armenia and across the world annually. The rich and diverse repertoire of the orchestra covers multiple genres and performance formats, ranging from symphonies to ballet and opera music to symphonic arrangements of popular and cinematic music or jazz interpretations of classical music.

Along with recurrent debut performances of great masterpieces from the world heritage of classical music, the orchestra places a considerable importance in exposing contemporary and young composers as well, featuring new works in its mainstream programming throughout concert seasons.

Together with its Founding Artistic Director and Principal Conductor, Sergey Smbatyan, the Armenian State Symphony Orchestra has established four annual classical music festivals, hosting in Armenia a multitude of internationally renowned virtuoso performers and conductors over years, including artists such as Gil Shaham, Mischa Maisky, Steven Isserlis, Maxim Vengerov, Mikhail Pletnev, Gautier Capuçon, Sergey Khachatryan, Andreas Ottensamer, Ning Feng, Joseph Calleja, Thomas Hampson, Dmitry Yablonsky, Hannu Lintu, John Malkovich and many others.



The orchestra treasures years of friendship and cooperation with remarkable contemporary composers such as Arvo Pärt, Tigran Mansuryan, Krzysztof Penderecki, Giya Kancheli, Sir Karl Jenkins and Qigang Chen.

By virtue of its belief in the meaningful dialogue between classical music and modern technology, the Armenian State Symphony Orchestra is profiled as a highly tech-driven and innovative orchestra, with a perpetual pursuit of experimental diversity by leveraging AI and other high-tech solutions in its artistic endeavors.

The orchestra has a growing input in the education of young people in Armenia. Launched in 2018, the Symphonic DasA program strives to incite curiosity, understanding and liking for classical music among high school students.

The program is designed to bring the youth and high quality musical art closer together and share entertaining knowledge about classical music. The orchestra also targets university students in the framework of “My Symphonic” project, conducting focus group surveys, meeting sessions and providing invitations to concerts. Aside from educational programs, master classes with prominent artists are held frequently for young musicians.

With a committed awareness of its social responsibility, the Armenian State Symphony Orchestra ensures the cultural engagement of vulnerable social groups by regularly issuing invitations and making available complimentary attendances to the orchestra’s performances, along with involving in charity concerts and events for fundraising purposes.

ՓԱՌԱՏՈՆԻ ԾՐԱԳԻՐ

FESTIVAL PROGRAM



14 ՄԱՐՏ

«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀ

Էդգար Հովհաննիսյան

Պասակալիա սիմֆոնիկ նվագախմբի համար

Առնո Բաբաջանյան

Թավջութակի կոնցերտ

- I. Andante sostenuto
- II. Andante con amore
- III. Allegro energico con fuoco
- IV. Andante sostenuto
- V. Tempo I

Ընդմիջում

Վաչե Շարաֆյան

Սյուիտ «Երկրորդ լուսինը» բալետից
(Գ.Ի. Գյուրջիևի մասին)

- I. Գյումրի, երիտասարդություն
- II. Լիլիթի ծնունդը, առաջին սեր
- III. Սուֆիների պարը
- IV. Ճշմարտության որոնողներ
- V. Գյուրջիևի տեսած Երկրորդ լուսինը
- VI. Տիբեթյան վանականները և գուրու Շենրաբի հոգին
Լհասա լճի վերևում. Փոխակերպումներ...
- VII. Ճշմարտության որոնման ճանապարհորդությունը
- VIII. Գագաթնակետը. Փոխակերպում Բեղզեբուլի, «Զիկր» պարը
- IX. Հրեշտակների երգը
- X. Գյուրջիևը և Լիլիթը դրախտում

Մենակատար՝ **Էտտորե Պագանո** (թավջութակ)
Դիրիժոր՝ **Ռուբեն Ղազարյան**

14 MARCH

ARAM KHACHATURIAN CONCERT HALL

Edgar Hovhannisyan

Passacaglia for Symphony Orchestra

Arno Babajanian

Cello Concerto

- I. Andante sostenuto
- II. Andante con amore
- III. Allegro energico con fuoco
- IV. Andante sostenuto
- V. Tempo I

Intermission

Vache Sharafyan

“Another Moon” Ballet Suite
(about G.I. Gurdjieff)

- I. Gyumri, youth
- II. Birth of Lilith, first love
- III. Dance of sufis
- IV. The truth seekers
- V. Another moon seen by Gurdjieff
- VI. Tibethian monks and the soul of guru Shenrab
above the lake Lhasa. Transformations...
- VII. Traveling in search of the truth
- VIII. The Climax. Transformation into Beelzebub, ZIKR dance
- IX. Song of Angels
- X. Gurdjieff and Lilith in heaven

Soloist: **Ettore Pagano** (cello)
Conductor: **Ruben Gazarian**

19 ՄԱՐՏ

«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀ

Ալեքսանդր Հարությունյան

Տոնական նախերգանք

Չեփորի կոնցերտ լյա բեմոլ մաժոր

Ավետ Տերտերյան

Սիմֆոնիա թիվ 3

Մենակատար՝ **Սելինա Օտտ** (շեփոր)

Դիրիժոր՝ **Սերգեյ Սմբատյան**

19 MARCH

ARAM KHACHATURIAN CONCERT HALL

Alexander Arutiunian

Festive Overture for Symphony Orchestra

Trumpet Concerto in A flat major

Avet Terterian

Symphony No. 3

Soloist: **Selina Ott** (trumpet)

Conductor: **Sergey Smbatyan**

28 ՄԱՐՏ

«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀ

«ՄԱՐԴՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ»

Վահագն Վարդանյան

Պրելյուդ, պասակալիա և ֆուգա
սիմֆոնիկ նվագախմբի համար

Արամ Սաթյան

«Մակբեթ» սիմֆոնիկ պոեմ

Ընդմիջում

Զոն Տեր-Թադևոսյան

Սիմֆոնիա թիվ 2 «Մարդու ճակատագիրը»

Ըստ Միխայիլ Շոլոխովի «Մարդու ճակատագիրը» պատմվածքի

- I. Prologue. Largo - Con moto ma molto tranquillo - Tempo I
- II. Allegro vivo, con fuoco e molto con spirito -Tranquillo - Tempo I
- III. Andante cantabile - Poco a poco più mosso -
Rubato, amabile con moto - Tempo I
- IV. Andante abbandonatamente - Furioso con colore e vigore -
Molto rubato ed appassionato - Poco animato - Allegro risoluto -
Andante maestoso - Andante abbandonatamente
- V. Epilogue. Andante con amore, fresco - Maestoso

Դիրիժոր՝ **Ալեքսանդր Հումալա**

28 MARCH

ARAM KHACHATURIAN CONCERT HALL

“FATE OF A MAN”

Vahagn Vardanyan

Prelude, Passacaglia and Fugue
for symphony orchestra

Aram Satian

Symphonic Poem “Macbeth”

Intermission

John Ter-Tatevosian

Symphony No.2 “Fate of a Man”

Based on Mikhail Sholokhov's Story “Fate of a Man”

- I. Prologue. Largo - Con moto ma molto tranquillo - Tempo I
- II. Allegro vivo, con fuoco e molto con spirito -Tranquillo - Tempo I
- III. Andante cantabile - Poco a poco più mosso -
Rubato, amabile con moto - Tempo I
- IV. Andante abbandonatamente - Furioso con colore e vigore -
Molto rubato ed appassionato - Poco animato - Allegro risoluto -
Andante maestoso - Andante abbandonatamente
- V. Epilogue. Andante con amore, fresco - Maestoso

Conductor: **Alexander Humala**

ՄԵՆԱԿԱՏԱՐՆԵՐ

SOLOISTS



ԷՏՏՈՐԵ ՊԱԳԱՆՈ ETTORE PAGANO

ԹԱՎՋՈՒԹԱԿ
CELLO



2003թ. Յունուսի Ետտորե Պագանոն թավջութակ սկսել է սովորել ինը տարեկանում: Սովորել է «Չիգիանայի ակադեմիայում» (Անտոնիո Մենեսեսի և Դավիդ Գերինգասի ղեկավարությամբ), ինչպես նաև Պավիայի թավջութակի ակադեմիայում (Էնրիկո Դինոյի ղեկավարությամբ) և Կրեմոնայի Վալտեր Շտաուֆերի ակադեմիայում: Յունուսի Սանտա Չեչիլիայի անվան կոնսերվատորիայում եռամյա ուսումնառությունն ավարտել է գերազանց գնահատականներով և արժանացել բարձր գնահատանքի:

2013 թվականից ի վեր՝ 40-ից ավելի հանրապետական և միջազգային մրցույթներում արժանացել է առաջին մրցանակի: 2017թ. Նյու Յորքի արտիստների միջազգային ասոցիացիայի կողմից արժանացել է կրթաթոշակի և հեղինակավոր «Քարնեգի Հոլլ» համերգասրահում ելույթի մրցանակի: 2019թ. «Լա Սկալայի ֆիլհարմոնիայի» «Երիտասարդ երաժիշտների» մրցույթում և 2020թ. Պյորտշախի Յոհաննես Բրամսի անվան մրցույթում ճանաչվել է առաջին մրցանակի հաղթող: Նրա տպավորիչ նվաճումների ցանկում վերջին միջազգային հաղթանակը 2022թ. հունիսին Երևանում կայացած Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի առաջին մրցանակն է:

Էտտորե Պագանոն արդեն միջազգային համերգային հրավերներ է ստացել Փարիզի, Բեռլինի, Յամբուրգի, Յալլեի, Զիլի, Ավստրիայի, ԱՄՆ-ի, Զուվեյթի համերգասրահների կողմից: Որպես մենակատար նա նաև հանդես կգա Խորվաթիայի հեռուստատեսության և ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի, Գրացի ֆիլհարմոնիկ, Լիտվայի Կլայպեդայի կամերային նվագախմբերի, Երիտասարդ երաժիշտների եվրոպական նվագախմբի և Յայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ:

2022-2023թթ. սպասվում են հրավերներ իտալական առաջատար համերգային ընկերությունների և նվագախմբային հաստատություններին կողմից, ինչպես նաև հաստատված համերգներ Թուրինում, Միլանում, Ջենովայում, Վերոնայում, Վենետիկում, Տրիեստում, Բոլոնիայում, Անկոնայում, Յունուսի, Նեապոլում, Պալերմոյում, Կալյարիում և այլուր:



Ettore Pagano, born in Rome in 2003, began studying the cello at the age of nine. A pupil at the Accademia Chigiana under Antonio Meneses and David Geringas, he attended the Pavia Cello Academy with Enrico Dindo and the Walter Stauffer Academy in Cremona. He completed the three-year degree course at the Conservatorio di S. Cecilia in Rome, graduating with top marks, honours and distinction.

Since 2013, he has been awarded first prize in more than 40 national and international competitions. In particular, in 2017 he was awarded a scholarship and a concert prize at the prestigious Carnegie Hall by the New York International Artist Association; in 2019 he won First Prize at the 'Young Musicians' Competition promoted by the Filarmonica della Scala; in 2020 he won First Prize at the 'Johannes Brahms' Competition in Pörschach. The most recent international award that enriches his impressive list of victories is the first prize at the prestigious Khachaturian Cello Competition held in June 2022 in Yerevan.

He has already been invited to play recitals on major international stages in Paris, Germany (Berlin, Hamburg, Halle, Kiel), Austria, the United States of America, Kuwait; and as soloist with the Croatian Radiotelevision Symphony Orchestra, the Graz Philharmonic, the Lithuanian Klaipeda Chamber Orchestra, the Young Musicians European Orchestra, the Armenian State Symphony Orchestra.

Invitations to leading Italian concert societies and orchestral institutions are on the calendar for 2022-23, with confirmed engagements - among others - in Turin, Milan, Genoa, Verona, Venice, Trieste, Bologna, Ancona, Rome, Naples, Palermo, Cagliari, etc.

ՍԵԼԻՆԱ OSS SELINA OTT

ՇԵՓՈՐ
TRUMPET



Սելինա Օտտը երաժշտական կրթությունը սկսել է դաշնամուրի դասերով, երբ հինգ տարեկան էր: Մեկ տարի անց իր հոր՝ Էրիխ Օտտի հետ նա սկսել է շեփոր նվագել: 2011-2016թթ. ուսումը շարունակել է Վիեննայի Երաժշտության և կատարողական արվեստների համալսարանում, իսկ 2015-2016 թվականներին՝ Կարլսրուի երաժշտական համալսարանում:

Նա բազմիցս համերգների է հրավիրվել Արևմտագերմանական ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի, Չեխիայի ֆիլհարմոնիկ նվագախմբի, Բեռլինի գերմանական սիմֆոնիկ նվագախմբի և այլ առաջատար նվագախմբերի կողմից: Որպես մենակատար հանդես է եկել նաև Մարիինյան թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի (դիրիժոր Վալերի Գերգիևի ղեկավարությամբ), Վիեննայի սիմֆոնիկ նվագախմբի, Վիեննայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի, Լյեծի թագավորական ֆիլհարմոնիկ նվագախմբի, Յոմիուրիի ճապոնական սիմֆոնիկ նվագախմբի, Զամբուրգի սիմֆոնիկ նվագախմբի, Բազելի «Կոլեգիում մուզիկում» նվագախմբերի հետ:

Սելինա Օտտը ելույթներ է ունեցել այնպիսի անվանի համերգային դահլիճներում, ինչպիսիք են Վիեննայի «Konzerthaus» և «Musikverein» համերգասրահները, Բեռլինի, Քյոլնի, Էսսենի, Լյուքսեմբուրգի, Լիեծի ֆիլհարմոնիաները, Պրահայի «Ռուդոլֆինիում» համերգասրահը, Տոկիոյի «Metropolitan Theatre»-ի և Բազելի երաժշտական թատրոնի դահլիճները:

2020թ. հոկտեմբերին Վիեննայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի և դիրիժոր Ռոբերտո Պատերնոստրոյի հետ համատեղ «Orfeo» ձայնագրային ընկերության պիտակով Սելինա Օտտը թողարկել է իր առաջին այլոմը՝ Զարությունյանի, Պեսկինի և Դեսենկլոսի ստեղծագործությունների ձայնագրություններով:



Selina Ott started her music studies at the age of five years on the piano. One year later, she began to study trumpet with her father Erich Ott. She continued her studies at the University of Music and Performing Arts in Vienna from 2011-2016 and additionally at the University of Music in Karlsruhe in the years of 2015 and 2016.

She has been invited to perform with leading orchestras such as the WDR Symphony Orchestra, the Czech Philharmonic and the Deutsches Symphonie Orchester Berlin. She has already played with the Mariinsky Theatre Symphony Orchestra under the baton of Valery Gergiev, the Vienna Symphony, the ORF Vienna Radio Symphony Orchestra, Orchestre Philharmonique Royal de Liège, Yomiuri Nippon Symphony Orchestra, Symphoniker Hamburg, Nordwestdeutsche Philharmonie and Collegium Musicum Basel as well.

As a soloist Selina Ott played in halls like the Wiener Konzerthaus, Musikverein Wien, Philharmonie Berlin, Kölner Philharmonie, Philharmonie Essen, Philharmonie Luxembourg, la Salle Philharmonique de Liège, Rudolfinum Prague, Tokyo Metropolitan Theatre and Musical Theater Basel.

In October 2020 she released her first album in collaboration with the ORF Vienna Radio Symphony Orchestra and Roberto Paternostro with works by Arutiunian, Peskin and Desenclos by the label Orfeo.

ԴԻՐԻՇՈՐՆԵՐ

CONDUCTORS



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՒՄԱԼԱ ALEXANDER HUMALA



Ալեքսանդր Հումալան երգչախմբային դիրիժորություն սովորել է Բելառուսի պետական երաժշտական ակադեմիայում, իսկ սիմֆոնիկ դիրիժորություն սկսել է ուսումնասիրել Ռոտերդամի կոնսերվատորիայում: Այնուհետև մագիստրոսական դասընթացներում շարունակել է մասնագիտանալ ականավոր ուսուցիչների մոտ, որոնց թվում է Քոլին Մեթրոզը, Նեեմե Յարվին և Յորմա Պանուլան:

Դեբյուտային ելույթով 2003թ. հանդես է եկել Բելառուսի երաժշտական ակադեմիայի կամերային նվագախմբի և «Երիտասարդ Բելառուս» սիմֆոնիկ նվագախմբի հետ, որին հաջորդել են միջազգային առաջին ելույթը Լիտվայի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ և հյուրախաղերի հրավերը իտալական «Giovanile della Saccisica» նվագախմբի հետ:

2014-2016թթ. Կատովիցե քաղաքում գործել է որպես Լեհաստանի ազգային ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորի օգնական, իսկ 2013-2019թթ. զբաղեցրել է բելառուսական «Capella Sonorus» անսամբլի գլխավոր դիրիժորի պաշտոնը: 2017-2021թթ. եղել է Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժորը:

Ալեքսանդր Հումալան համագործակցել է Վարշավայի ազգային ֆիլհարմոնիկ, Լեհական ռադիոյի ազգային սիմֆոնիկ, Լատվիայի ազգային ֆիլհարմոնիկ, Տրոնդհեյմի սիմֆոնիկ, Զագրեբի ֆիլհարմոնիկ նվագախմբերի և մի շարք այլ նվագախմբերի հետ, ինչպես նաև անվանի մենակատարներ Ռոզան ֆիլիպենսի, Մարկ Կոպպեյի, Ժենևիվ Ծորոսերի, Ուրսուլա Քրայզերի, Ծիմոն Ներինգի և ուրիշների հետ: Դիրիժորը նաև համերգներ է վարել աշխարհահռչակ ջազային մենակատարների մասնակցությամբ, որոնց թվում է Չիկ Կորեան, Բրենդֆորդ Մարսալիսը, Արտուրո Սանդովալը, Ջեյմի Քալումը, Քուրտ Էլինգը, Փեթ Մետենին և երաժիշտներ: 2021/2022 համերգաշրջանից Ալեքսանդր Հումալան Կրակովի ֆիլհարմոնիայի գեղարվեստական ղեկավարն է:



Alexander Humala Studied choral conducting at the Belarusian State Academy of Music in Minsk, and symphonic conducting at the Rotterdam Conservatory. Further on, he honed his skills during master courses offered by outstanding teachers such as Collin Metters, Neeme Järvi, and Jorma Panula.

He made his debut in 2003, alongside the chamber orchestra of the Belarusian Academy of Music. In the same year, he appeared with the Symphony Orchestra "Young Belarus", followed by an international debut performance with the Lithuanian State Symphony Orchestra, and invitation for guest appearances with the Italian Orchestra Giovanile della Saccisica.

In 2014-2016, he was assistant conductor of the Polish National Radio Symphony Orchestra in Katowice, and in the years 2013-2019, he held the post of principal conductor of the Belarusian ensemble Capella Sonorus. From 2017 until 2021, he acted as conductor of the Russian National Philharmonic Orchestra.

Alexander Humala cooperated, inter alia, with the National Philharmonic Orchestra in Warsaw, National Symphony Orchestra of Polish Radio, Latvian National Philharmonic Orchestra, Trondheim Symphony Orchestra, Zagreb Philharmonic Orchestra, etc. He performed with many outstanding soloists, including Gautier Capuçon, Boris Berezovsky, Rosanne Philippens, Marc Coppey, Geneviève Strosser, Urszula Kryger, Szymon Nehring, and others. He conducted concerts with the involvement of world-renowned jazz soloists, including Chick Corea, Brandford Marsalis, Arturo Sandoval, Jamie Cullum, Kurt Elling, Pat Metheny and others. From Season 2021/2022 Alexander Humala is Artistic Director of the Krakow Filharmonia.

ՌՈՒՔԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ RUBEN GAZARIAN



2020-2021թթ. համերգաշրջանից սկսած Ռուբեն Ղազարյանը Ալտենբուրգ Գերայի թատրոնի գլխավոր երաժշտական տնօրենն է: Բացի այդ, նա 2023թ. մարտից զբաղեցնում է Հայաստանի ազգային կամերային նվագախմբի գլխավոր հրավիրյալ դիրիժորի պաշտոնը:

Տասնվեց տարի շարունակ՝ 2002-2018թթ., Ռուբեն Ղազարյանը եղել է Հայլբրոնի Վյուրտեմբերգյան կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը: Այս ժամանակահատվածում ավելի քան 860 համերգով և 26 ձայնասկավառակի թողարկումով նա հարստացրել է նվագախմբի հիմնական երկացանկը՝ պարբերաբար ընդլայնելով դրա սիմֆոնիկ ընդգրկումը: Հայլբրոնում զբաղեցրած պաշտոնին զուգահեռ՝ 2015թ. սկզբից մինչև 2020թ. դեկտեմբեր Ռուբեն Ղազարյանը դարձավ Ինգոլշտատի վրացական կամերային նվագախմբի գլխավոր դիրիժորն ու գեղարվեստական ղեկավարը:

Որպես հրավիրյալ դիրիժոր՝ Ռուբեն Ղազարյանը ղեկավարել է այնպիսի անվանի նվագախմբեր, ինչպիսիք են Շտուտգարտի ռադիոյի սիմֆոնիկ, Քյոլնի WDR սիմֆոնիկ, Ֆրանկֆուրտի ռադիոյի սիմֆոնիկ, Համբուրգի սիմֆոնիկ, Կասսելի պետական թատրոնի, Բեռլինի գերմանական սիմֆոնիկ նվագախմբերը, Ֆրանկֆուրտի օպերային, Վիսբադեն Հեսսիանի պետական, Հերֆորդի Հյուսիսարևմտյան Գերմանիայի ֆիլհարմոնիկ, Լիոնի ազգային նվագախմբերը, Երուսաղեմի սիմֆոնիկ, Թել Ավիվի «Rishon LeZion» օպերային նվագախմբերը, Վրոցլավի ֆիլհարմոնիկ, Բելգրադի ֆիլհարմոնիկ, Յյուրիխի կամերային նվագախմբերը:

Ղազարյանը մեծ հաջողությամբ համագործակցում է այնպիսի հանրաճանաչ երաժիշտների հետ, ինչպիսիք են Գոթթե և Ռենո Կապյուտոնները, Յուլիա Ֆիշերը, Հիլարի Հանը, Կատյա և Մարիել Լաբեքները, Էլիզաբեթ Լեոնսկայան, Սաբին Մեյերը, Վիկտորիա Մուլլովան, Սերգեյ Նակարյակովը, Գերհարդ Օպիցը, Ֆազիլ Սայը, Ժան-Իվ Տիբաուդեն, Ֆրենկ Պետեր Ֆիմերմանը, «Beaux Arts Trio» տրիոն, «Gewandhaus» կվարտետը և շատ ուրիշներ:



Ruben Gazarian is the General Music Director of the Theatre Altenburg Gera, starting with the 2020/2021 season. In addition, he holds the position of the Principal Guest Conductor of the National Chamber Orchestra of Armenia since March 2023.

For sixteen years - from 2002 to 2018 - Ruben Gazarian was the Artistic Director and Principal Conductor of the Württemberg Chamber Orchestra Heilbronn. In more than 860 concerts and 26 CD productions of this time, he enriched the standard repertory of the orchestra by regularly expanding it to symphonic dimensions. Parallel to his position in Heilbronn, at the beginning of 2015 Ruben Gazarian became principal conductor and artistic director of the Georgian Chamber Orchestra Ingolstadt. His Ingolstadt tenure ended in December 2020.

As guest conductor Ruben Gazarian has directed such renowned orchestras as the Radio-Sinfonieorchester Stuttgart des SWR, the WDR-Sinfonieorchester Köln, hr-Sinfonieorchester Frankfurt, the Hamburg Symphony Orchestra, the Kassel State Theater Orchestra, the Deutsches-Symphonie-Orchester Berlin, the Frankfurt Museum Orchestra (Frankfurt Opera Orchestra), the Hessian State Orchestra Wiesbaden, the Northwest German Philharmonic Herford, the Orchestre National de Lyon, the Jerusalem Symphony Orchestra, the Orchestra Rishon LeZion (Tel Aviv Opera Orchestra), the Wroclaw Philharmonic Orchestra, the Belgrade Philharmonic Orchestra, Zurich Chamber Orchestra and many others.

Gazarian works successfully with acclaimed musicians such as Gautier and Renaud Capuçon, Julia Fischer, Hilary Hahn, Katia & Marielle Labèque, Elisabeth Leonskaja, Sabine Meyer, Viktoria Mullova, Sergey Nakariakov, Gerhard Oppitz, Fazil Say, Jean-Yves Thibaudet, Frank Peter Zimmermann, the Beaux Arts Trio, the Gewandhaus-Quartet and several others.

ՍԵՐՂԵՅ ՍՄԲԱՏՅԱՆ SERGEY SMBATYAN



Սերգեյ Սմբատյանը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժորն է, Մալթայի ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորը և Բեռլինի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր հրավիրյալ դիրիժորը: Որպես դասական երաժշտության ժողովրդականացման ակտիվ ջատագով դիրիժորը ծավալում է հազեցած միջազգային գործունեություն, ինչպես նաև մեծ կարևորություն է տալիս դասական երաժշտության լսարանի երիտասարդացմանը և համաշխարհային ժամանակակից դասական երաժշտության հանրաճանաչմանը:

Սերգեյ Սմբատյանը մի շարք ամենամյա երաժշտական փառատոների, ինչպես նաև Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի գեղարվեստական ղեկավարն է: Նրա նախաձեռնությամբ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն իրականացնում է կրթամշակութային ծրագրեր՝ ուղղված երիտասարդ սերնդի մշակութային զարգացմանը: Սերգեյ Սմբատյանի կողմից հիմնադրված «Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամը (M4FF) 2019 թվականից աջակցում է պատանի երաժիշտներին մասնագիտական առաջընթացին:

Վերջին համերգաշրջաններում որպես հրավիրյալ դիրիժոր ղեկավարել է Լոնդոնի սիմֆոնիկ նվագախումբը, Լոնդոնի «Ֆիլհարմոնիա» նվագախումբը, Վարշավայի ֆիլհարմոնիկ, Դրեզդենի ֆիլհարմոնիկ, Բրատիսլավայի Սլովակ ֆիլհարմոնիկ և այլ նվագախմբերի: 2022-2023 համերգաշրջանում դիրիժորն ակտիվ համերգային շրջագայություններ է ունեցել Միացյալ Թագավորությունում Ռումինիայի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ, իսկ 2023թ. ղեկավարել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ՄԹ հյուրախաղերը՝ նվիրված Արամ Խաչատրյանի 120-ամյակին:

2023 թվականից Սերգեյ Սմբատյանը ՅՈՒՆԻՍԵՖ-ի ազգային դեսպան է:



Sergey Smbatyan is the Artistic Director and Principal Conductor of the Armenian State Symphony Orchestra, the Principal Conductor of the Malta Philharmonic Orchestra and the Principal Guest Conductor of Berlin Symphony Orchestra. A passionate popularizer of classical music, the conductor has extensive international engagement, while championing rejuvenation of classical music audiences and promoting contemporary classical music worldwide.

Sergey Smbatyan serves as Artistic Director of a number of annual music festivals, as well as the Khachaturyan International Competition. He has initiated a variety of educational and cultural programs which are implemented by the Armenian State Symphony Orchestra with the aim of fostering cultural development among the younger generation. Meanwhile, the Music for Future Foundation (M4FF), established by Sergey Smbatyan, has been supporting the professional advancement of young musicians since 2019.


In recent concert seasons, he has performed as a guest conductor with the London Symphony Orchestra, the Philharmonia Orchestra, the Warsaw Philharmonic Orchestra, the Dresden Philharmonic, Slovak Philharmonic Orchestra of Bratislava and other orchestras. In the 2022-2023 concert season, Sergey Smbatyan toured the United Kingdom with the Romanian National Philharmonic Orchestra, and in 2023 led the Armenian State Symphony Orchestra on a UK tour dedicated to Aram Khachaturyan's 120th anniversary.

Sergey Smbatyan was appointed as a UNICEF National Ambassador in 2023.

ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

COMPOSERS





ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ ALEXANDER ARUTIUNIAN

Հայ անվանի կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ալեքսանդր Հարությունյանը դարձել է առաջին կարգի Ստալինյան մրցանակի (ԽՍՀՄ պետական մրցանակի) դափնեկիր (1949թ.), արժանացել է ԽՍՀՄ և Հայաստանի Հանրապետության բազմաթիվ բարձր շքանշանների և կոչումների, այդ թվում՝ «Օրփեոս» դիպլոմի (ԱՄՆ, 1983թ.):

Կոմպոզիտորի հարուստ ժառանգությունը ներառում է գրեթե բոլոր երաժշտական ժանրերը՝ «Սայաթ Նովա» օպերա, սիմֆոնիա, վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններ, տարբեր գործիքների և նվագախմբի համար գրված կոնցերտային 18 ստեղծագործություն, կամերային, անսամբլային, վոկալ ստեղծագործություններ, ինչպես նաև թատերական ներկայացումների և կինոֆիլմերի համար գրած երաժշտություն:

Ալեքսանդր Հարությունյանի երաժշտությունն ավելի քան կես դար կատարվում է աշխարհի շատ երկրներում: Այն հնչել է Ե. Մրավինսկու, Ն. Գոլովանովի, Ա. Ստասևիչի, Ե. Սվետլանովի, Մ. Ռոստրոպովիչի, Կ. Էլիասբերգի, Ա. Յանսոնսի, Կ. Մազուրի, Գ Ռոժդեստովենսկու, Վ. Ֆեդոսենի, Վ. Գերգիևի, Վ. Սպիվակովի և այլ դիրիժորների ղեկավարությամբ: Երաժշտական փառատոներում և համերգային ծրագրերում իրենց տեղը վստահորեն հաստատած նրա ստեղծագործությունները հրատարակվել են «Hans Sikorski» (Գերմանիա), «Peters» (Գերմանիա), «Boosey & Hawkes» (Մեծ Բրիտանիա), «Ricordi» (Իտալիա), «C. Schirmer» (ԱՄՆ), «Alphonse Leduc» (Ֆրանսիա) և այլ հրատարակչությունների կողմից:

Հարությունյանի ձեփորի կոնցերտը կոմպոզիտորի ամենահայտնի ստեղծագործությունն է, որը հնչում է ամբողջ աշխարհում: Այն իր հանրահայտությամբ ձեփորի համար երբևէ գրված հինգ ամենաշատ կատարվող կոնցերտներից մեկն է, և ներառված է բազմաթիվ վիրտուոզ ձեփորահարների նվագացանկերում:

Հայ կոմպոզիտորական արվեստի 15-րդ փառատոնի ծրագրում ներառված են ձեփորի կոնցերտը, որը կհնչի Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի և անվանի ձեփորահար Սելինա Օտտի կատարմամբ, ինչպես նաև «Տոնական նախերգանքը»:



Alexander Arutiunian, a renowned Armenian composer and People's Artist of the USSR, was honored with the First-class Stalin Prize (USSR State Prize, 1949). Subsequently, he received numerous high-ranking medals and titles from both the USSR and the Republic of Armenia, including the "Orpheus" diploma (USA, 1983).

The composer's rich musical legacy encompasses nearly all musical genres, ranging from the opera "Sayat Nova" and symphonies to vocal-symphonic compositions and 18 concert works written for various instruments and orchestra. Additionally, he created chamber music, ensemble pieces, vocal compositions, and scores for theater performances and films.

Alexander Arutiunian's music has been widely performed around the world for more than half a century, with renowned conductors such as E. Mravinsky, N. Golovanov, A. Stasevich, E. Svetlanov, M. Rostropovich, K. Eliasberg, A. Jansons, K. Mazur, G. Rozhdestvensky, V. Fedoseev, V. Gergiev, V. Spivakov, and many others interpreting his compositions. Securing a special place in numerous music festivals and concert programs, the composer's works have been published by notable publishers such as Hans Sikorski (Germany), Peters (Germany), Boosey & Hawkes (UK), Ricordi (Italy), C. Schirmer (USA), Alphonse Leduc (France), and others.

Arutiunian's Trumpet Concerto stands as the composer's most renowned work, played globally. It is widely acknowledged as one of the five most frequently performed trumpet concertos ever composed and is featured in the repertoires of numerous virtuoso trumpeters.

The 15th Armenian Composing Art Festival program will showcase Arutiunian's Trumpet Concerto, performed by the Armenian State Symphony Orchestra and the celebrated trumpeter Selina Ott, as well as the "Festive Overture".



ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆԻԱՆ ARNO BABAJANIAN

Կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ Առնո Բաբաջանյանը 20-րդ դարի հայ երաժշտական մշակույթի ամենահին քննադատարկ արվեստագետներից է: Ծնվել է 1921թ. հունվարի 21-ին, Երևանում: Նրա երաժշտական կարողությունները դրսևորվեցին վաղ հասակից: Երաժշտական առաջին դասերը սկսելուց մի քանի տարի անց տեղի է ունենում ապագա կոմպոզիտորի առաջին ելույթը սիմֆոնիկ նվագախմբի հետ: Բաբաջանյանը կատարում է Բեթհովենի դաշնամուրի առաջին կոնցերտը: Այս համերգով Հայաստանում առաջին անգամ սիմֆոնիկ նվագախմբի հետ հնչեց դաշնամուրը: Նրա ստեղծագործական ոճի ձևավորման փուլում զգալի է Արամ Խաչատրյանի և Սերգեյ Ռախմանինովի երաժշտության ազդեցությունը:

1938թ. Բաբաջանյանը մեկնում է Մոսկվա՝ մեկ տարի սովորելու Պետհիմների անվան երաժշտական ուսումնարանի վերջին կուրսում: 1947թ. ավարտում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական բաժինը: Այս շրջանում գրում է իր առաջին խոշոր երկը՝ Դաշնամուրային կոնցերտը: 1948թ. ավարտում է Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային բաժինը:

1950-ականներից Բաբաջանյանը նվիրվում է Նաև մանկավարժական գործունեությանը: 1950-1956 թթ. դասավանդում է Երևանի կոնսերվատորիայում: Այս տարիներին են գրվել «Հերոսական բալլադը» (1950թ.), «Հայկական ռապսոդիան» (1950 թ.), Դաշնամուրային տրիոն (1952 թ.) և այլ երկեր: 50-ականների վերջից կոմպոզիտորը հիմնականում բնակվում է Մոսկվայում, սակայն ամեն տարի պարտադիր մի քանի ամսով վերադառնում է հայրենիք: 1959թ. կոմպոզիտորը գրում է Ջութակի և դաշնամուրի սոնատը, որը կարելի է համարել կոմպոզիտորի ստեղծագործական հասունության բարձրակետերից: Կոմպոզիտորի երկացանկում առանցքային տեղ են զբաղում Նաև դաշնամուրային մանրանվագները՝ «Էլեգիան», «Էքսպրոմտը», «Մեղեդին», «Վաղարշապատի պարը», «Հումորեսկը» և այլն:

Հայ կոմպոզիտորական արվեստի 15-րդ փառատոնի շրջանակում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի և թավջութակահար Էստոռնե Պազանոյի կատարմամբ կինչի կոմպոզիտորի Թավջութակի կոնցերտը, որի գործիքավորումը կատարել է Ջոն Տեր-Թադևոսյանը:




Composer, pianist, pedagogue Arno Babajanian is one of the most unique Armenian composers of the 20th century. He was born in Yerevan, on January 21, 1921. His musical talent was revealed from an early age. Few years after his first piano lessons he had his debut with a symphony orchestra. He performed Beethoven's Piano concerto No.1: it was now that the instrument was played with the orchestra for the first time in Armenia (conductor: Gevorg Budaghyan). Babajanian's first works are influenced by Aram Khachaturian and Sergey Rachmaninoff.

In 1938 moved to Moscow, where he studied at Gnessin State Music College for one year. In 1947 Babajanian graduated from Yerevan Komitas State Conservatory, Department of composition (class of Vardges Talyan). During this period he wrote his Piano concerto. Then, in 1948 he graduated from the Piano Department of Moscow Conservatory (class of Konstantin Igumanov). Parallely, from 1946 to 1948, he took master-classes at the Armenian House of Culture in Moscow at composers H. Litinsky, N. Peyko, V. Tsukerman.

From the 1950s Babajanian started his career as a teacher. In 1950-1956 he taught at Yerevan Komitas State Conservatory. During this period he wrote his "Heroic Ballad" (1950), "Armenian Rhapsody" (1950), Piano trio (1952) and other famous pieces. From the late 1950s the composer moved to Moscow, but every year he was returning to the fatherland. In 1959, the composer wrote his Sonata for Violin and Piano, which is considered to be the peak of his career. The composer's repertoire also includes "Elegy", "Impromptu", "Melody", "Vagharshapat Dance", "Humoresque" and other beloved piano pieces.

In the framework of the 15th Armenian Composing Art Festival, cellist Ettore Pagano will join the Armenian State Symphony Orchestra to perform Babajanian's Cello Concerto (instrumentation by John Ter-Tatevosian).



ԱՎԵՏ ՏԵՐՏԵՐԻԱՆ AVET TERTERIAN

Կոմպոզիտոր, ՀՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ավետ Տերտերյանը 20-րդ դարի հայ երաժշտության վառ ու ինքնատիպ անհատականություններից է: Նրա անվան հետ է կապվում հայկական սիմֆոնիզմի զարգացման նոր շրջանը:

Տերտերյանը 1948-1951թթ. սովորել է Բաքվի երաժշտական ուսումնարանում, 1957թ. ավարտել է Երևանի կոնսերվատորիան (Էդվարդ Միրզոյանի դասարան), 1967թ.՝ Նույն ԲՈՒՀ-ի ասպիրանտուրան: 1970-94 թթ. դասավանդել է կոնսերվատորիայում (1985 թվականից՝ պրոֆեսոր): 1960-63թթ. եղել է Հայաստանի կոմպոզիտորների միության քարտուղար:

Նրա երաժշտության մեջ Նշանակալի տեղ են գրավում «Կրակե օղակ», «Երկրաշարժ» օպերաները, «Ռիչարդ III-ի մենախոսությունները» բալետը, «Հայրենիք» և «Յեղափոխություն» վոկալ-սիմֆոնիկ շարքերը, լարային երկու կվարտետները, Թավջութակի և դաշնամուրի սոնատը, բազմաթիվ ռոմանսներ: Առավել հայտնի են կոմպոզիտորի 8 սիմֆոնիաները, որոնք աչքի են ընկնում ձևի, բովանդակության, երաժշտական լեզվի, շարականների ավանդույթների փոխակերպման նորարարական հնարքներով: Տերտերյանի 9-րդ սիմֆոնիան անավարտ է:

Կոմպոզիտորը միահյուսել է ազգային երաժշտության հնագույն ավանդույթները և արևմտաեվրոպական երաժշտության նորագույն տեխնիկական հնարքները, անդրադարձել հայկական ժողովրդական և հոգևոր երաժշտության, հնագույն արևելյան մշակույթների խոր ավանդույթներին: Ճարտնակելով սիմֆոնիզմի դասական ավանդույթները, Ավետ Տերտերյանը հանդես է գալիս որպես իսկական նորարար՝ առաջին անգամ սիմֆոնիկ նվագախմբի կազմում ընդգրկելով ժողովրդական գործիքներ՝ դուդուկ, զուռնա, քամանչա, դափ և այլն: Տերտերյանը գրել է երաժշտություն նաև տարբեր ժանրերի կինոնկարների համար:

Հայ կոմպոզիտորական արվեստի 15-րդ փառատոնի շրջանակում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը կկատարի Ավետ Տերտերյանի թերևս ամենահայտնի՝ Երրորդ սիմֆոնիան:



Avet Terterian, a composer and People's Artist of Armenia and the USSR, stands out as one of the brightest and most authentic figures in Armenian music of the 20th century. His name is closely linked to a new era in the development of Armenian symphonic art.

From 1948 to 1951, Terterian studied at Baku Music School. In 1957, he graduated from the Yerevan Conservatory under the guidance of Edward Mirzoyan, and in 1967, he completed post-graduate studies at the same university. From 1970 to 1994, he lectured at the conservatory, assuming the role of a professor in 1985. From 1960 to 1963, he served as the secretary of the Union of Composers of Armenia.

A significant place in Avet Terterian's musical repertoire is occupied by the operas "Ring of Fire" and "Earthquake," the ballet "Monologues of Richard III," the vocal-symphonic series "Homeland" and "Revolution," two string quartets, a cello and piano sonata, and numerous romances. His most renowned works are the 8 symphonies, distinguished by their innovative transformations of form, content, musical language, and hymn traditions. Terterian left his 9th symphony unfinished.

The composer interwove ancient traditions of national music with the latest technical tricks of Western European music, drawing inspiration from the deep traditions of Armenian folk and spiritual music, as well as ancient Eastern cultures. Continuing the classical symphonic traditions, Avet Terterian acted as a true innovator, being the first to include folk instruments in a symphony orchestra, such as the duduk, zurna, kamancha, tambourine, etc. Terterian also composed music for movies of various genres.

In the framework celebration of the 15th of Armenian Composing Art Festival, Avet Terterian's perhaps most famous Third Symphony will be presented by the Armenian State Symphony Orchestra.



ԱՐԱՄ ՍԱԹՅԱՆ ARAM SATIAN

Կոմպոզիտոր, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Արամ Սաթյանը հայ արդի կոմպոզիտորական արվեստի ակնառու ներկայացուցիչներից է:

Ծնվել է 1947թ. Երևանում: 1965թ. ավարտել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի կոմպոզիցիայի բաժինը (պրոֆ. Է. Բաղդասարյանի դասարան), իսկ 1970թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական բաժինը (պրոֆ. Ալ. Չարությունյանի դասարան): 1981-1984թթ. ուսումը շարունակել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտուրայում՝ պրոֆեսոր Էդվարդ Միրզոյանի ղեկավարությամբ: Ուսումնառության ավարտից առ այսօր դասավանդում է վերոնշյալ բարձրագույն ուսումնական հաստատության ստեղծագործական ամբիոնում (1997-ից՝ պրոֆեսոր):

Կոմպոզիտորի ակտիվ և բազմաժանր՝ երաժշտաթատերական, սիմֆոնիկ, կամերային ստեղծագործական գործունեություն մեջ գերակշռում են սիմֆոնիկ երաժշտության երկերը, որոնց թվում՝ 5 սիմֆոնիա, կոնցերտներ, սիմֆոնիկ պոեմներ և այլն: Սաթյանը հեղինակ է նաև հայ իրականության մեջ առաջին փոփ օպերայի («Լիլիթ»), երկու մյուզիքլների, ավելի քան 300 երգերի և ռոմանսների, ինչպես նաև մի շարք թատերական ներկայացումների և կինոֆիլմերի համար գրված երաժշտության: Արամ Սաթյանի ստեղծագործությունները պարբերաբար հնչել են Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Արգենտինայում և այլուր: Արամ Սաթյանը 2013-ից առ այսօր Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահն է:

2011 թվականին Արամ Սաթյանին շնորհվել է ՀՀ արվեստի վասստակավոր գործչի կոչում, 2007-ին պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալով», 2017-ին՝ «Հայրենիքին մատուցած ծառայության համար» I-ին աստիճանի մեդալով, իսկ 2022-ին՝ մշակույթի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար «Մովսես Խորենացի» մեդալով:

Փառատոնի շրջանակում կինչի «Մակբեթ» սիմֆոնիկ պոեմը, որը կոմպոզիտորն ավարտել է 2024-ին: Այն շեքսպիրյան եռերգության երկրորդ մասն է (առաջինը ներկայացնում է «Համլետ»-ի ողբերգությունը):



Aram Satian, a composer, pedagogue, public figure in the sphere of music, and the President of the Union of Composers of Armenia, as well as Professor at the Komitas State Conservatory of Yerevan, is one of the prominent representatives of modern Armenian composing art.

Born in Yerevan in 1947, he graduated from the Composition Department at the R.Melikyan Music School (under the guidance of Professor E. Baghdasaryan) in 1965. In 1970, he graduated with honors from the Composition Department of the Komitas State Conservatory of Yerevan (class of Professor A.I. Harutiunian). From 1981 to 1984, Aram Satyan pursued post-graduate studies at the Komitas State Conservatory of Yerevan, guided by Professor Edward Mirzoyan. Ever since his complete graduation, Aram Satian has been lecturing at the Chair of Composition of the same Conservatory, serving as a Professor since 1997.

Within the wide range of Aram Satian's compositional diversity, encompassing theatrical, symphonic and chamber music, symphonic works are noticeably prevalent and include five symphonies, concertos, symphonic poems, and various other compositions. Additionally, Aram Satian is renowned as the composer of the first Armenian pop opera "Lilit," two musicals, over 300 songs and romances, as well as musical pieces for theater performances and films. Works by Satian have been consistently performed in Russia, USA, France, Argentina and elsewhere. In 2013, he was appointed as the President of the Union of Composers of Armenia, a position he still holds today.

In 2011, Aram Satian was awarded the title of Honorary Worker of Art of the Republic of Armenia, in 2007 - the "Golden Medal" of the RA Ministry of Culture, in 2017 - The first-class Medal of "Services to the Motherland", and in 2022 he was awarded the The Medal of Movses Khorenatsi for Contributions to the Development of Culture.»

The festival will feature the composer's most recent symphonic poem "Macbeth," completed in 2024 as the second part of the Shakespearean trilogy, (with the first represented with "Hamlet").



ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ EDGAR HOVHANNISSYAN

Անվանի կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը ծնվել է 1930թ. Երևանում: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան (1953թ., Գրիգոր Եղիազարյանի դասարան), ապա՝ Մոսկվայի կոնսերվատորիայի ասպիրանտուրան (1957, Արամ Խաչատրյանի դասարան): 1962-1968թթ եղել է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի տնօրեն, 1970-1974թթ՝ Հայկական ժողովրդական երգի-պարի համույթի, 1979-1984թթ՝ Հայկական հեռուստատեսության և ռադիոյի կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար, 1986-1991 թվականներին՝ ԵՊԿ ղեկավար:

Բազմաժանր ստեղծագործությունների հեղինակին հաջողվել է գտնել նոր ու ինքնատիպ լուծումներ՝ միաժամանակ պահպանելով միայն իրեն հատուկ հնչերանգային մտածողությունը: 20-րդ դարի երկրորդ կեսի հայ երաժշտության միջավայրում Էդգար Հովհաննիսյանի երաժշտությունն աչքի է ընկնում ազգայինը նորովի վերաիմաստավորելու և մեկնաբանելու ձգտումով:

Էդգար Հովհաննիսյանն Էական ազդեցություն է ունեցել հայ երաժշտության զարգացման գործում: Գրել է բալետներ՝ «Մարմար» (1957թ.), «Երկնագույն նոկտյուրն» (1964թ.), «Հավերժական կուռք» (1966թ.), «Անտոնի» (1969թ.), Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի համար գրված Ա. Խաչատրյանի երաժշտության բալետային կոմպոզիցիա («Դիմակահանդես», 1982թ.): Երաժշտաբեմադրական արվեստի արդի միտումներին համահունչ են «Սասունցի Դավիթ» օպերա-բալետը (1976թ.), «Ճանապարհորդություն դեպի Արգրում» (ըստ Պուշկինի համանուն նոթերի) օպերան (1987թ.): Նրա առաջին բալետը՝ «Մարմարը», նշանավորեց «հայկական նոր բալետի ծնունդը»: Սկսվեց հայկական բալետի, ինչպես նաև ընդհանրապես հայկական օպերային թատրոնի աննախադեպ ակտիվության աստեղային ժամանակաշրջանը, երբ 30-ամյա երիտասարդ արվեստագետը ստանձնեց Օպերայի և բալետի թատրոնի տնօրինությունը: Կոմպոզիտորի համարձակ մտահղացումների համար բարեբեր հող դարձավ երաժշտական թատրոնի ասպարեզը: Այս ժանրում է գրվել Էդգար Հովհաննիսյանի ստեղծագործական ժառանգության նշանակալի մասը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ Հայ կոմպոզիտորական արվեստի 15-րդ փառատոնի բացման համերգին կհնչի Էդգար Հովհաննիսյանի Պասակալիան «Անտոնի» բալետից:



The renowned Armenian composer Edgar Hovhannissyan was born in Yerevan in 1930. He graduated from the Komitas State Conservatory of Yerevan (1953, class of Grigor Yeghiazaryan), which were followed by postgraduate studies at the Moscow Conservatory (1957, class of Aram Khachaturyan). From 1962 to 1968 he was Director of the Spendiaryan Opera and Ballet Theater, and from 1970 to 1974 he served as Artistic Director of the Armenian Folk Song-Dance Ensemble. Later, from 1979 to 1984, he was Artistic Director of the Chamber Choir of Television and Radio of Armenia, and from 1986 to 1991 he was the rector of the Komitas State Conservatory of Yerevan.

Author of versatile musical works, the composer managed to explore novel and unique solutions, while maintaining his unique tonal handwriting. In the context of the Armenian music of the second half of the 20th century, Edgar Hovhannissyan's music is distinguished with an urge to reinterpret the authenticity of national music in new ways.

Edgar Hovhannissyan had a significant impact on the development of Armenian music. He is the author of the ballets "Marble" (1957), "Sky Blue Nocturne" (1964), "Timeless Idol" (1966), "Antooni" (1969), a ballet composition to Khachaturian's music for Lermontov's drama "Masquerade" (1982) and other iconic works. His ballet opera "David of Sassoon" (1976), the opera "Journey to Arzrum" (1987, according to Pushkin's memoirs) resonated with the contemporary trends of musical drama art. Hovhannissyan's first ballet, "Marmar", heralded the dawn of the new Armenian ballet, marking the stellar rise and an unprecedented advancement of the Armenian ballet and opera in general, when the national Opera and Ballet Theater was entrusted to the leadership of a 30-year-old artist. The area of musical theater proved to be fertile for the composer's bold artistic ideas, and a significant part of Edgar Hovhannissyan's musical legacy was composed in this genre.

Edgar Hovhannissyan's Passacaglia from the ballet "Antooni" will be performed by the Armenian State Symphony Orchestra at the opening concert of the 15th Armenian Composing Art Festival.



ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ VAHAGN VARDANYAN

Վահագն Վարդանյանը ծնվել է 1995թ. Երևանում, արվեստի փորձագետ Վարդան Վարդանյանի ընտանիքում: Սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, ստեղծագործության ամբիոնում (բակլավիրատ՝ 2013-2017թթ., մագիստրատուրա՝ 2017-2019թթ., պրոֆ. Վարդան Աճեմյանի մասնագիտական դասարան): Զուգահեռ ուսանել է ԵՊԿ-ի դոցենտ Արեգ Սարգսյանի դաշնամուրի մասնագիտական դասարանում: Տիրապետում է բազմաթիվ փողային երաժշտական գործիքների, այդ թվում՝ բլոկֆլեյտա, ֆլեյտա, բամբուզաֆոն, կիթառ և այլ փողային ու կսմիթային նվագարաններ: Դոկտոր, պրոֆեսոր Սվետլանա Սարգսյանի գիտական ղեկավարությամբ 2022թթ. ասպիրանտի որակավորում է ստացել երաժշտության տեսության մասնագիտացմամբ: 2018 թվականից հանդիսանում է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ծրագրերի համակարգողը:

Հեղինակ է վոկալ-դաշնամուրային, երգչախմբային, կամերային-գործիքային, և սիմֆոնիկ ստեղծագործությունների, որոնք կատարվել են Հայաստանում, Ռուսաստանում, Գերմանիայում և Իտալիայում: Վահագն Վարդանյանի մասնագիտական խմբագրությամբ լույս են տեսել Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք երկ քառաձեռն դաշնամուրի համար» անտիպ ստեղծագործությունները, Գ. Բուդաղյանի «Դիտարկումներ Ա. Սպենդիարովի «Ալմաստ» օպերայի գործիքավորման շուրջ» երաժշտագիտական ուսումնասիրությունը:

Հայ կոմպոզիտորական արվեստի 15-րդ փառատոնի շրջանակում կինչի Վարդանյանի «Պրելյուդ, պասսակալիա և ֆուգա» ստեղծագործությունը, որը նրա առաջին ստեղծագործությունն է սիմֆոնիկ նվագախմբի համար: Այն գրվել է 2017թ. երգեհոնի և սիմֆոնիկ նվագախմբի կրկնակի կազմի համար, սակայն ժամանակի ընթացքում հեղինակն այն փոխադրել է սիմֆոնիկ նվագախմբի եռակի կազմի համար:



Vahagn Vardanyan was born in Yerevan in 1995 to a family of the art expert Vardan Vardanyan. He was educated at the Komitas State Conservatory of Yerevan, Department of Composition (Bachelor's studies of 2013-2017, Master's studies of 2017-2019, class of Prof. Vardan Achemyan). Meanwhile, he studied in the piano class of Associate Professor Areg Sargsyan of the Conservatory. He plays multiple brass instruments, including the recorder, flute, bambuzaphone, guitar, and other brass and plucked-string instruments. In 2022, under the academic guidance of Doctor Svetlana, Vahagn Sargsyan was qualified as a Ph.D. candidate, specializing in theory of music. Since 2018, he has been serving as the Coordinator of Artistic Programs at the Armenian State Symphony Orchestra.

He is author of vocal-piano, choral, chamber-instrumental and symphonic works, which were performed in Armenia, Russia, Germany and Italy. Under Vahagn Vardanyan's editorship, the unpublished works by Alexander Spendiaryan "Three pieces for four-handed piano" were published, and the musicological study of G. Budaghyan's "Observations of the instrumentation of A. Spendiarov's opera "Almast" was conducted.

Vardanyan's "Prelude, Passacalia and Fugue," his first work for a symphony orchestra, will be performed in the framework of the 15th Armenian Composing Art Festival. Written in 2017 for organ and a double symphony orchestra, the work was subsequently rearranged for triple symphony orchestra.



ՎԱՉԵ ՇԱՐԱՖՅԱՆ VACHE SHARAFYAN

Վաչե Շարաֆյանը հայ ժամանակակից կոմպոզիտորական արվեստի ակնառու ներկայացուցիչներից է: Ծնվել է 1966թ. Երևանում: 1990թ. ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական բաժինը, իսկ 1992-ին՝ ասպիրանտուրան Կրոֆետոր Էդվարդ Միրզոյանի ղեկավարությամբ:

Շարաֆյանը հեղինակ է երաժշտաթատերական, սիմֆոնիկ, կամերային, խմբերգային և վոկալ ժանրերում գրված 100-ից ավելի ստեղծագործության, այդ թվում՝ «Աբգար արքա» և «Երկկողմ ճանապարհորդություն դեպի դրախտ» օպերաների, «Հին աստվածներ» (ըստ Լ. Շանթի), «Անապատի հարսը» (ըստ Սոնա Վանի) և «Երկրորդ լուսինը» բալետների, ինչպես նաև մի շարք թատերական ներկայացումների և ֆիլմերի համար գրված երաժշտության: Շարաֆյանի ստեղծագործություններն արժանացել են միջազգային մամուլի ուշադրության: («The New York Times», «Boston Globe», «Chicago Tribune», «The Strad»): Շարաֆյանը թավջութակահար Յո-Յո Մայի հրավերով 2001-ից առ այսօր նաև «SilkRoad» կազմակերպության պաշտոնական կոմպոզիտորն է: Շարաֆյանի ստեղծագործությունները հնչել են Յայաստանում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Կանադայում, Իտալիայում, Ճապոնիայում, Հինաստանում և այլուր: Նրա ստեղծագործությունները հրատարակվել են ԱՄՆ-ում (G. Schirmer), Մեծ Բրիտանիայում (A-RA), Շվեյցարիայում (Editions BIM), Ֆրանսիայում (Billaudot):

1992-1996-ին Վ. Շարաֆյանը դասավանդել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում, 1997-ից առ այսօր՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, իսկ 2023-ից՝ կոմպոզիցիայի բաժնի վարիչն է: Շարաֆյանն արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի (2017թ.), իսկ 2020-ին՝ ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալի:

Կոմպոզիտորը «Երկրորդ լուսինը» բալետը գրել է 2013թ. Իտալիայի Բոլլիակոյի արվեստի կենտրոնում: Տասը տեսարաններից բաղկացած բալետի լիբրետտյում, որի հեղինակը Գևորգ Վարդանյանն է, այլաբանորեն նկարագրված է 20-րդ դարի հայ փիլիսոփա, խորհրդապաշտ Գեորգի Իվանի Գյուրջիևի (1866-1949) անհատականության ձևավորումը, զարգացումն ու կայացումը: Ստեղծագործությունը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ կինչի Հայ կոմպոզիտորական արվեստի 15-րդ փառատոնի բացման համերգին:




Vache Sharafyan is one of the most prominent representatives of the modern period of Armenian music composing art. Born in Yerevan in 1966, Vache Sharafyan graduated from the Department of Composition of the Komitas State Conservatory of Yerevan in 1990, later also completing postgraduate studies in 1992, under the guidance of Professor Edward Mirzoyan.

He is author of over 100 works spanning musical theater, symphonic, chamber, choral, and vocal genres, among which the operas "King Abgar" and "Two-way Journey to Heaven", ballets "Ancient Gods" (based on Levon Shant), "The Desert Bride" (based on Sona Van) and "Another Moon," as well as a number of scores for theater and cinema. Sharafyan's work has garnered international acclaim, with recognition from publications such as "The New York Times," "Boston Globe," "Chicago Tribune," and "The Strad." Invited by renowned cellist Yo-Yo Ma in 2001, Vache Sharafyan has been the official resident composer at the "SilkRoad" organization to the present day. His compositions have been performed in Armenia, the USA, Russia, France, Great Britain, Germany, Canada, Italy, Japan, China, and other countries. Furthermore, his works have been published by esteemed publishers such as G. Schirmer (USA), A-RA (Great Britain), Editions BIM (Switzerland), and Billaudot (France).

Sharafyan lectured at the "Zharangavorats School" in Jerusalem from 1992 to 1996 and has been teaching at the Komitas State Conservatory in Yerevan since 1997, while also heading the Department of Composition since 2023. Sharafyan was awarded the Gold Medal of the RA Ministry of Culture in 2017, and the Medal of Movses Khorenatsi in 2020.

The composer wrote the ballet "Another Moon" in 2013 at the Bolliaco Art Center in Italy. In the libretto of the ten-scene ballet, authored by Gevorg Vardanyan, allegorically depicts the formation, development and shaping of the character of the 20th century Armenian philosopher and mystic Georgi Gurdjieff (1866-1949). "Another Moon" ballet suite for symphony orchestra will be performed by the Armenian State Symphony Orchestra at the opening concert of the 15th Armenian Composing Art Festival.



ՋՈՆ ՏԵՐ-ԹԱՂԵՎՈՍՅԱՆ JOHN TER-TATEVOSIAN

Ջոն Տեր-Թաղևոսյանը ծնվել է 1926թ. Երևանում: 1952թ. ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիայի ջութակի բաժինը՝ Վ.Պորտուգալովի ղեկավարությամբ, իսկ 1961թ.՝ Կոմպոզիցիայի բաժինը՝ Է. Միրզոյանի ղեկավարությամբ: 1952-1959թթ. եղել է Երևանի Կ. Սարաջևի անվան երաժշտական դպրոցի տնօրենը:

Կոմպոզիտորի ձեռքբերումները սկսվել են դեռևս կոնսերվատորայում սովորելու տարիներին: Կոմպոզիտորի դեբյուտը տեղի է ունեցել 1957թ. Առաջին սիմֆոնիայով, երբ Տեր-Թաղևոսյանը Երևանի պետական կոնսերվատորիայի երրորդ կուրսի ուսանող էր:

Կոմպոզիտորի ժառանգությունն ընդգրկում է Քնարական պոեմը սիմֆոնիկ նվագախմբի համար, լարային կվարտետները, 5 սիմֆոնիաները:

Առաջին սիմֆոնիայից երկու տարի անց, լույս տեսավ երկրորդ սիմֆոնիան՝ Ջոն Տեր-Թաղևոսյանի դիպլոմային աշխատանքը՝ գրված Շոլոխովի «Մարդու ճակատագիրը» վիպակի տպավորություններով, որն ընթերցելուց հետո կոմպոզիտորը սիմֆոնիան անվանեց համանուն վերնագրով:

Ջոն Տեր-Թաղևոսյանը նաև հեղինակ է բազմաթիվ կինոֆիլմերի երաժշտության: Նա համագործակցել է անվանի ռեժիսորներ Միխայիլ Ռոմի, Գրիգորի Ռոշալի, Լեոնիդ Լուկինի և այլոց հետ:

Ինչպես նշում է իր հոդվածում Արաքսի Սարյանը՝ «Ջիվան Տեր-Թաղևոսյանն իր էությամբ ու մտածողությամբ իսկական սիմֆոնիստ էր և մեծ վարպետությամբ ու անհատական զգացողությամբ էր տիրապետում նվագախմբին: Այս ժանրում նա իրեն զգում է, ինչպես ծուկը ջրում: Նրա նույնիսկ կամերային ստեղծագործություններում առկա է իսկական սիմֆոնիզմը, բազմապլան մտածողությունը: Նրա համար գործություն չունեին օրենքներ, կանոններ, սահմանափակումներ, կարևորը երաժշտությունն էր»:

Չայ կոմպոզիտորական արվեստի 15-րդ փառատոնի փակման համերգի ծրագրում կհնչի



John Ter-Tatevosian was born in Yerevan in 1926. He graduated from the Department of violin of the Yerevan State Conservatory, under the guidance of V.Portugalov in 1952, and the Department of composition in 1961, under E.Mirzoyan. From 1952 to 1959 served as the Director of the Sarajev Music School.

The composer's achievements began in the years of his studies at the conservatory. The debut of the composer's music took place with his First symphony in 1957, when Ter-Tatevosian was a third-year student at the Yerevan State Conservatory.

The composer's legacy includes the Lyric poem for symphony orchestra, String quartets and 5 symphonies.

After completing his First Symphony, John Ter-Tatevosian published his Second Symphony, which served as his diploma work. This composition was inspired by Mikhail Sholokhov's novel "Fate of a Man," prompting Ter-Tatevosian to title the symphony accordingly.

In addition to his symphonic works, Ter-Tatevosian has composed music for numerous films, collaborating with renowned directors such as Mikhail Rom, Grigory Roshal, Leonid Lukin, and others.

As described in an article by Araxi Saryan, "Jivan Ter-Tatevosian was a real symphonist by nature and mindset who masters the orchestra with great skill and individual feeling. In this genre, he feels like a fish in water. You can feel a genuine symphony and a multi-layered even in his chamber works. Laws, rules, restrictions did not apply to him. Music was all that mattered."

John Ter-Tatevosian's Second Symphony "Fate of a Man" will be performed in the closing concert of the 15th Armenian Composing Art Festival.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ՊԱՏՎԱԿՈՐ ԽՈՐՀՈՐԴ

HONORARY BOARD OF TRUSTEES
OF THE ARMENIAN STATE SYMPHONY ORCHESTRA



ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՍԱՅԱՆ
ALEKSANDR YESAYAN

Խորհրդի նախագահ,
«Team Telecom Armenia»-ի համահիմնադիր
Chairman of the Board,
Co-founder of Team Telecom Armenia



ՎԱՀԵ ԿՈՐՅՈՅԱՆ
VAHE KUZOYAN

«ServiceTitan»
ընկերության նախագահ և համահիմնադիր
President & Co-Founder at ServiceTitan



ԼՈՍԻՆԵ ԵՐԻԱԳՅՈՐՅԱՆ
LUSINE YEGHIAZARYAN

«SADA SYSTEMS» ընկերության
գլխավոր ֆինանսական տնօրեն
Chief Financial Officer of
SADA SYSTEMS



ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ
MIKAYEL VARDANYAN

«PicsArt»
ընկերության համահիմնադիր
Chief Product Officer &
Founding Partner at PicsArt



ԳԱՐՈ ԱՐՄԵՆ
GARO ARMEN

«Հայաստանի մանուկներ»
բարեգործական հիմնադրամի (COAF)
հիմնադիր-նախագահ
Founder and Chairman
of the Children of Armenia
Charitable Foundation (COAF)



ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՐՅԱՆ
TIGRAN MANSURYAN



ԷԴՈՒԱՐԴ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
EDUARD TADEVOSYAN



ԱՐՎՈ ՊՅԱՐՏ
ARVO PÄRT



ԶՈՐԻՆ ՄԵԹԱ
ZUBIN MEHTA



ՎԱԼԵՐԻ ԳԵՐԳԻԵՎ
VALERY GERGIEV



ՍԱԼՎԱՏՈՐԵ ԱԿԿԱՐԴՈ
SALVATORE ACCARDO



ՄԱՐԻՆ ԱԼՍՈՓ
MARIN ALSOP



ԿՈՍՏԱ ՊԻԼԱՎԱԿԻ
COSTA PILAVACHI



ԷՐԻԿ ՈՒԻԹԱԿՐ
ERIC WHITACRE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ
ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ARTISTIC BOARD
OF THE ARMENIAN STATE SYMPHONY ORCHESTRA



ARMENIAN
STATE
SYMPHONY
ORCHESTRA

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՍԻՄՖՈՆԻԿ
ՆԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ